

Տիգրան Մ. Պետրոսյանց

ՎԱԶՈՒՏՅԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆԱԿԱՆ ՏԱՆ

Այրարատի կողմնակալություն-փոխարքայությունը*

Բանալի բառեր – Զաքարե Բ, Իվանե Ա, Զաքարյաններ, Այրարատ նահանգ, կողմնակալություն-փոխարքայություն, Վաչե Ա, Անբերդ մայրաքաղաք, ամիրա, հեջուր, հրամանակատար, տանուտեր, ձեռնավոր:

12-րդ դարի երկրորդ կեսին հայկական գինուծի միավորում է տեղի ունեցել, ստեղծվել է հայկական բանակ, որի ղեկավարներից առանձնացել է Սարգիս Մեծ Զաքարյանը: Նա ձկուն քաղաքականության շնորհիվ իր ձեռքն է վերցրել հայկական գինուծի ընդհանուր հրամանատարությունը: Երբ 1178-ին Գեորգի Գ-ի դեմ ապստամբելու պատճառով Վրաց թագավորը «հրամայեաց ջնջել գլխատակ ազգին Օրբելեանց ... ի Վրաց աշխարհին»¹, Օրբելյանների տոհմը սրի է քաշվել և գրկվել վրացական բանակի հրամանատարությունից ու Լոռիում ունեցած կալվածքներից:

Դրանից հետո հայկական գորաբանակի հրամանատար Սարգիս Մեծ Զաքարյանը կարգվել է հայ-վրացական բանակի ընդհանուր հրամանատար: 1185-ին Թամար թագուհին նրան է հանձնել նաև հայ-վրացական բանակի ընդհանուր հրամանատարին տրվող կալվածքը՝ Լոռի-Տաշիրը², երկրամասին շնորհելով «սամթավրո» (ինքնուրույնացած) կարգավիճակ՝ դրանով իսկ ընդունելով երկրամասի անկախությունը³:

Սարգիս Մեծի փոխարեն Հայկական բանակի հրամանատար-ամիր-սպասալարներ են դարձել նրա որդիներ Զաքարե Բ-ն և Իվանե Ա-ն: 1187-ին մահացած Սարգիս Մեծ Զաքարյանի փոխարեն 1191 թ. հայ-վրացական զորքերի ընդհանուր հրամանատարությունն ստացել է Սարգիս Մեծի ավագ որդի Զաքարե Բ-ն: Զաքարե Բ-ի և Իվանե Ա-ի մասին պատմիչ Կիրակոս Գանձակեցին գրել է, որ «քաջ մարդիկ էին ու հզոր էին իշխանությանը և արժանացել էին պատիվների վրաց թագուհու կողմից»⁴: Հենց

*Հոդվածն ընդունվել է տպագրության 10.01.2018:

1 Ստեփանոս Օրբելյան, Պատմության տանն Սիսական, Մոսկվա, 1861, էջ 285:

2 Տե՛ս Մելիքսեթ-Քեյ Լ., «Վարդապետք Հայոց Հյուսիսային կողմանց» և նրանց ինքնությունը, վրացերենից թարգմանեց Հրաչ Բայրամյանը, Ս. Էջմիածին, 2016, էջ 61-63:

3 Տե՛ս Թորոսյան Խոսրով, «Թագավորների պատմությունն ու գովաբանությունը» որպես Զաքարյան Հայաստանի պատմության սկզբնաղբյուր, Եր., 1992, էջ 283-287:

4 Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատասիրությունը Կ.Ա.Մելիք-Օհանջանյանի, Եր., 1961, էջ 162:

նրանք էլ դարձել են վրաց արքունիքի ամենանշանավոր դեմքերը:

1191-1200-ական թվականներին՝ երկու տասնամյակի ընթացքում, Զաքարե Բ-ն և Իվանե Ա-ն «բազում մարտս քաջութեան ցուցին, քանզի զբազում աշխարհս հայոց, զոր ունէին պարսիկք և տաճկունք, առին ի նոցանէ յինքեանս՝ զգաւառս, որ շուրջ զծովովն Գեղարքունւոյ, և զՏաշիր, և զԱյրարատ, զԲջնի քաղաք և զԴուին, և զԱնքերդ, և զԱնի քաղաք և զԿարս, և զՎայոյ ձոր, և զաշխարհն Սիւնեաց և որ շուրջ զնովար են բերդք, քաղաքք, և գաւառք. հարկատուս արարի և զսուլտանն Կարնոյ քաղաքին. աւերեցին զբազում գաւառս Պարսից և զԱտրպատականու, ընդարձակեցին զսահմանս իւրեանց յամենայն կողմանց»⁵: Այսինքն՝ սելջուկ-թուրքերից ազատագրվել են ժամանակին Անի-Շիրակի, Կարսի, Ձորագետի, Սյունյաց թագավորություններին պատկանած հողային տիրույթները, Դվին քաղաքն իր շրջակա գավառներով:

Ազատագրված հողերում Զաքարյանները հիմնել են պետություն: Նրանք դարձել են Հայաստանի ինքնիշխան տիրակալներ և իրենց հայտարարել Բագրատունի թագավորների իրավահաջորդներ: Ժամանակակիցները Զաքարյանների պետությունը կոչել են «պետություն», «աշխարհակալ պետություն», «պետական իշխանություն», «աշխարհակալություն», իսկ իրենց՝ Զաքարյաններին՝ «թագավոր», «շահնշահ», «կեսար»⁶, բոլոր այն տիտղոսներով, որ կրել են Բագրատունիները: Հայտարարելով իրենց Բագրատունի թագավորական ընտանիքի ժառանգ, իրավահաջորդ և հինավուրց պետականության վերականգնող՝ Զաքարյանները իրավաբանորեն կրկնակի թագադրվելու խնդիր չեն իրականացրել՝ բավարարվելով նրանով, որ տիրել են «...սէփական ժառանգութեանն նախնեաց մերոց»⁷: Սրանով պիտի բացատրվի Զաքարյանների չթագադրվելը, որ մինչ այսօր նրանց ստեղծած պետությունը դրել է կասկածի տակ կամ այն համարվել է վրացական իշխանության վասալ, առավելս՝ բացարձակ անհասկանալի եզրույթով՝ իշխանապետություն:

Անկախ պետության ամբողջական վերականգնման փուլն ավարտվել է 1205-1206 թվականներին, երբ Հայաստանի պետականության վերականգնման գործընթացը երկրի վարչական ռեֆորմով հասել է իր ավարտին:

13-րդ դարի սկզբին Զաքարյան Հայաստանում իրականացվել է վարչական կառավարման ռեֆորմ, և ստեղծվել են կողմնակալություն-փոխարքայություններ: Կառավարման այս նոր կառույցը ենթադրել է նոր մոտեցումներ: Կողմնակալություն-փոխարքայություններում ևս ձևավորվել են արքունիք-պալատներ, որոնք բառացիորեն կազմվել են Զաքարյան արքայատան սկզբունքով: Ինչպիսի արքունիք ուներ Զաքարե Բ-ն, նույնպիսի արքունիք էին ձևավորել կողմնակալություն-փոխարքայությունները: Կառավարման հիերարխիայի (իշխանակարգ) գլուխը կողմնակալ-փոխարքան էր՝ իշխանաց իշխան բարձրագույն կոչումով: Պալատական պաշտոնեության շարքերը լրացրել են տեղական իշխանները:

Զաքարե Բ Զաքարյանը իր զորավարներից **Վաչե Ա Վաչուտյանին** է

⁵ Նույն տեղում, էջ 162-163:

⁶ Հայ ժողովրդի պատմություն, հատ. 3, Եր., 1976, էջ 541-544: Տես նաև՝ «Հայկական Հանրագիտարան», հատ. 3, Եր., 1977, էջ 676-677: Տես նաև **Մանանդյան Հ.**, Երկեր, հատ. Գ, Եր., 1977, էջ 154:

⁷ Դիվան հայ վիճագրության, պրակ 6, Եր., 1977, էջ 22 (արձանագրություն Հաղարծինի գավթի մուտքին):

հանձնել Այրարատ նահանգի տարածքում ստեղծված կողմնակալություն-կուսակալության կողմնակալ-փոխարքայի պաշտոնը, ռազմավարական խիստ կարևոր նշանակություն ունեցող Անբերդ (Ամբերդ) ամրոցը և սեփականության իրավունքով՝ Նիգ-Արագածոտն գավառները:

Հովհաննավանքի Կաթողիկե եկեղեցու կառուցման առթիվ 1217-ին փորագրված արձանագրության սկզբնամասում Վաչե Ա-ն նշել է. «ՈԿԶ /1217/: Ի ծագմանէ շնորհացն Աստուծոյ, ի հիմնանալ և լուսաւորիլ եկեղեցիացս գաւառիս Արայրատու ի ձեռն երկուց եղբարց հարագատաց Զաքարիայի և Իւանէի, և արդարածնունդ գաւակաց սոցա Շահանշահի և Աւագի, ես՝ Վաչէ իշխանաց իշխան, որդի Սարգսի Վաչուտանց, սիրեցեալ ի սոցանէ մեծաւ պատուով, վասն հաւատարիմ ծառաութեան իմո, կոչեցա ի գործ վերակացութեան գաւառիս»⁸:

Կողմնակալություն-փոխարքայության կողմնակալ-փոխարքան Զաքարյան Հայաստանի պետական, վարչական, զինվորական բարձրագույն պաշտոնն էր: «Կողմնակալ-կուսակալները իրենց վստահված տիրույթներում հանդես էին գալիս որպես կենտրոնական իշխանության քաղաքական-վարչական ներկայացուցիչներ՝ օժտված վարչական-դատական-ֆինանսական գործառնությամբ, միաժամանակ և լիակատար ինքնավարությամբ»⁹- գրել է Լ. Բաբայանը:

Ստացած պաշտոնին համապատասխան՝ Վաչե Ա Վաչուտյանը ստացել է պետության բարձրագույն իշխանաց իշխան տիտղոսը, որն այնուհետև, ինչպես և սեփականության իրավունքով ստացած հողային տիրույթները, ժառանգական իրավունքով անցել են նրա հաջորդներին: Իշխանաց իշխան տիտղոսներ են կրել Վաչե Ա-ի հաջորդներ Քուրդ Ա-ն, Քուրդ Բ-ն, Թեոդոս Զրքինը: Փաստորեն ստացած տիտղոսն իրավաբանորեն համապատասխանել է Վաչե Ա Վաչուտյանի ստացած պաշտոնին: Նրա և ընտանիքի հաջորդների պաշտոնական գերակայությունը երկրամասի մյուս իշխանների նկատմամբ ամրապնդվել է նաև տիտղոսի գերակայությամբ:

Վաչուտյաններն իրենց իշխանական հիերարխիայում կանգնած էին ամենաբարձր աստիճանի վրա և իրենց անվանում էին մեծ իշխան¹⁰, իշխանաց իշխան¹¹, պարոն¹², տեր¹³, իսկ իրենց տիրապետությունը՝ «իշխա-

8 **Ղաֆաղարյան Կ.**, Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, Եր., 1948, էջ 82:

9 Հայ ժողովրդի պատմություն, հատ. 3, էջ 552:

10 Տես ԺԳ դարի հիշատակարաններ, Եր., 1984, էջ 82:

11 Նման տիտղոսներն առկա են Հովհաննավանքում, Մակարավանքում, Կարբիում, Սաղմոսավանքում, Թեղեկյաց վանքում, Աստվածընկալում և այլուր: Տես ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց **Լ. Ս. Խաչիկյանը**, Եր., 1950, էջ 270: Տես նաև՝ **Ղաֆաղարյան Կ.**, Հովհաննավանքը, էջ 82, 90, 92: Դիվան, 6, Եր., 1977, էջ 187/:

12 Տես Կեչառիսի Սուրբ Նշան եկեղեցու. «Յիշեսցիք յաղաթս գաստուածաւէր պարոն գՎաչէ, որ նորոգեաց վերստին գեկեղեցիս: ԹԻԿՆ ՈՇԲ (1223) էր» արձանագրությունը: Տես նաև՝ Ապարանի Աստվածընկալ եկեղեցու գավթի սյան վրա. «Ա(ստու)ած ողորմի պարոն Քրդին»: Ուշիի Սուրբ Սարգիս եկեղեցու արևմտյան պատին՝ «...ողորմութեամբ պարոն Քրդին» (ըլլոր արձանագրություններն էլ մեր հավաքածոյից են):

13 Տես Կարբիի հաղթականար-գանգակատան արևմտյան պատի. «Ես՝ Զրքինս, որդի Քրդին, տեր Անբերդո գաւառի» (մեր հավաքածոյից) արձանագրությունը:

նություն»¹⁴, «կողմնակալություն»¹⁵, «վերակացություն»¹⁶: Ցավոք, Վաչուտյանների իշխանության ներքին կարգի մասին բավարար տեղեկություններ մեզ չեն հասել: Մակայն ելնելով այլ իշխանությունների մասին եղած հիշատակություններից և վաչուտյանակերտ կառույցների պատերին պահպանված արձանագրությունների հատ ու կենտ տեղեկություններից՝ կարելի է եզրակացություն անել նրանց իշխանության պետական-վարչական աստիճանակարգի մասին:

Աստվածատուր և Հակոբ վարդապետների Հովհաննավանքի 1221 թվականի արձանագրության սկզբնամասում կարդում ենք. «յիշխանութե(ան) մեծի Շահնշահի, որդո Ջաքարիայի և ի կո(ղ)մնակալութե(ան) մերո նահանգի ամիր Քրդին, որդո Վաչէի, ՈՀ (1221) թ(ին)»¹⁷: Այս արձանագրության թվականը՝ 1221, Կարո Ղաֆաղարյանին սխալ եզրակացություն անելու առիթ է տվել: Նա գրել է, որ 1221-ին Վաչե Ա-ն արդեն չկար և իշխանությունն անցել էր Քրդին¹⁸: Իրականում Քուրդ Ա-ն հիշվում է որպես կողմնակալություն-փոխարքայության **ամիրա**:

Վաչե Ա-ն 1223-ին նորոգել է Կեչառիսի Սուրբ Նշան եկեղեցին, 1229-ին կնոջ հետ կառուցել է Հռոմոսի վանքի գրատունը: Մամախաթուն իշխանուհին Տեղերի 1232 թ. շինարարական արձանագրության մեջ Վաչե Ա-ի մասին խոսում է ներկա ժամանակով [...**ես՝ Մամախաթունս, շինեցի զեկեղեցիքս զմեծ և զփոքր և զժամատունս յիշատակ ինձ և առն իմոյ Վաչէի...**] և ոչ մի հիմք չկա կարծելու, որ արդեն 1221-ին Վաչե Ա-ն մահացած էր: Արձանագրությունից պարզվում է, որ Քուրդ Ա-ն մինչև իշխանության գահակալ-տիրակալ հռչակվելը (հոր կենդանության օրոք), եղել է Այրարատի կողմնակալություն-փոխարքայության ամիրա: Այս պաշտոնի իրավասությունը և դերը եղել է նահանգի ներքին կյանքի, առևտրականների և արհեստավորների նկատմամբ վերահսկողությունը, հարկադրման և հարկահավաքի կարգավորումը, զորահավաքը, ինչպես և թշնամական հարձակումների դեպքում բնակչության ուժերի կազմակերպումը:

Կողմնակալություն-փոխարքայության կարևոր պաշտոններից էին **հրամանակատարներն ու ծառայականները**: Ֆեոդալական հիերարխիայի այս ներկայացուցիչները տեղ ունեին նաև Վաչուտյանների պալատում: Հովհաննավանքի Կաթողիկե եկեղեցու արձանագրություններից հայտնի են նման պաշտոնյաներ: «Մե(ն)ք եղբարքս՝ Գրիգոր և Գուրգեն, հրամանակատարք Վաչէի, միաբանեցաք ս(ուր)ք ուխտիս, տւաք ինչս ի շինութի/ւն/ սորա»¹⁹: Մեկ այլ արձանագրություն փորագրվել է Սարգսի անունից. «Ես՝ Սարգիս՝ ծառայական Վաչէի, միաբանեցա ս(ուր)ք ուխտիս և ետու

14 Տես Հովհաննավանքի Կաթողիկե եկեղեցու արևմտյան պատի, 1243-ի «Յիշխանութե/ա/ն Շահանշահի... և մերո նահանգիս Քրդին» արձանագրությունը: Տես նաև՝ **Ղաֆաղարյան Կ.**, Հովհաննավանքը, էջ 95: Տես նաև՝ Մամախաթուն իշխանուհու 1310 թվականի հիշատակարանի՝ «... յիշխանութեան մերոյ գաւառիս Քրդին, որդոյ Տայիրին» տողերը (ԺԳ դարի հիշատակարաններ, էջ 65):

15 Տես Աստվածատուր և Հակոբ վարդապետների Հովհաննավանքի 1221-ի արձանագրության մեջ. «...և ի կո(ղ)մնակալութե/ան/ մերո նահանգի ամիր Քրդին» (**Ղաֆաղարյան Կ.**, Հովհաննավանքը, էջ 94):

16 Տես Անբերդի 1210-ական թվականների արձանագրության մեջ՝ «...վերակացութե(ան) գաւառիս Վաչէի» (մեր հավաքածուից):

17 **Ղաֆաղարյան Կ.**, Հովհաննավանքը, էջ 94:

18 Տես նույն տեղում:

19 **Ղաֆաղարյան Կ.**, Հովհաննավանքը, էջ 89:

ինչս ի շինութի(ւն) բարձրահետաց ս(ուր)բ եկեղեցոյս»²⁰: Ինչպես Գրիգոր և Գուրգեն հրամանակատարները, այնպես էլ Սարգիս ծառայականը, եկեղեցու կառուցման համար տված գումարների դիմաց ստացել է 2-ական պատարագ: Այս հրամանակատարներն ու ծառայականներն ամենայն հավանականությամբ զինվորական պաշտոնյաներ էին:

Կողմնակալություն-փոխարքայության կարևոր պաշտոններից էր նաև **հեջուրությունը**, որը, ինչպես նշել է Լ. Շ. Բաբայանը, համագոր էր իշխանական արքունիքի վերակացուի՝ սենեկապետի պաշտոնին²¹: Վաչե Ա Վաչուտյանի և նրա անմիջական հաջորդ Քուրդ Ա իշխանաց իշխանի պալատում հեջուրի պաշտոնակատարը չի հիշատակվել, բայց որ այդ պաշտոնը եղել է, հաստատում է Քուրդ Բ Անբերդեցու օրոք, 1300-ին Հովհաննավանքում փորագրված հետևյալ արձանագրությունը. «Ի թ(ւին) ՉԽԹ (1300): Շնորհաւք բարէրարին Ա(ստուծոյ), ես՝ հէճէպ Դաւիթ, որդի Հոնայի, թոճն Ավվեցոյն և ամուսին Նանայ, դուստր Տուտկանն, վ(ա)ս(ն) առ Ա(ստուա)ծ սիրոյն վէրստին հաստատեցաք զմիաբանութի(ւն) հարցն մեր ի Ս(ուր)բ Կարապետս: Վասն փրկութե(ան) հոգոց մեր տվաք շինական ի շինութի(ւն) Ձորի գեղին զԱլէտիս՝ մականուն Կոնկիկ, արարաք և այլ արդիւնս»²²: Արձանագրության **«վէրստին հաստատեցաք զմիաբանութիւն հարցն մեր ի Սուրբ Կարապետս»** հատվածը թույլ է տալիս եզրակացնելու, որ ինքը՝ հեջուր Դավիթը, ինչպես նաև նրա նախնիները՝ հայրը՝ Հոնան և պապը՝ Ավվեցոյը, որոնք իրենից առաջ նույնպես միաբանել են Հովհաննավանքի Սուրբ Կարապետին, նույնպես հանդիսացել են Վաչուտյանների պաշտոնակատարները կամ ավելի հավանական է՝ հեջուրները: Ըստ արձանագրության՝ հեջուր Դավիթի տոհմաձառը հետևյալ պատկերն ունի.

Ավվեցոյ

Հոնա (կինը՝ Գել)

հեջուր Դավիթ (կինը՝ Նանա, դուստրը՝ Տուտկան):

Բավական մեծ էր նաև պալատական ծառաների կամ ավելի ստույգ՝ ազատ սպասարկողների թիվը: Հովհաննավանքում արձանագրություններ ունեն Քուրդ Ա-ի կնոջ՝ Խորիշահի **դայակ** Մալիքան²³ և **աղախին** Անիփան²⁴: Մալիքան Խորիշահի դայակն էր սկսած նրա հորական տնից՝ Դսեղից: Անունն առաջին անգամ հիշատակվել է Դսեղ գյուղի մոտ գտնվող Բարձրաքաշ եկեղեցու հարավային պատի արևմտյան անկյունում, գավթի մեջ բացվող որմնախորշի վրա. «Ես՝ Մալիքա, դստակ Խորիշահի, դստեր Մարծպանա, միաբանեցա էկեղեցոյս»²⁵: Երբ 13-րդ դարի 10-ական թվակաների կեսերին Խորիշահն ամուսնացել է Քուրդ Ա Վաչուտյանի հետ և տեղափոխվել Անբերդ, Մալիքան նրա շքախմբի կազմում տեղափոխվել է Անբերդ: Հովհաննավանքի Կաթողիկե եկեղեցու ներսում, հարավային

20 Նույն տեղում:

21 Տես Հայ ժողովրդի պատմություն, հատ. 3, էջ 553:

22 **Ղաֆաղարյան Կ.**, Հովհաննավանքը, էջ 83:

23 Տես **Պետրոսյանց Տ.**, Տիկնայք փափկասուն Հայոց աշխարհի, Եր., 2005, էջ 69: **Նույնի՝** Հայրենական մշակույթի պաշտպան հայ կանայք: Մալիքա: «Էջմիածին», 1982, Գ, էջ 56-57:

24 Տես **Ղաֆաղարյան Կ.**, Հովհաննավանքը, էջ 87. «Ես՝ Անիփա, աղախին Խորիշահի, միաբանեցա սրբոցս և ետու ինչս, և սոքա սահմանեցին ի տարին :Բ: այր ժամ ի նոր կիրակէին: Որ չանէ՝ դատի ի տէ(ամնե)»:

25 **Սարգսյան Գ.**, Բարձրաքաշ վանքը և նրա արձանագրությունները, «Էջմիածին», 1951, սեպտեմբեր-հոկտեմբեր, էջ 40-45:

պատին, 13-րդ դարի կեսերին Մալիքայի անունից փորագրվել է. «... ես՝ Մալիքա, սն(ու)ցանող աստուածասէր տիկնոջն Խորիշահի վստահացա ի բարեխաւսութիւն Սուրբ Կարապետիս և միաբանեցա սուրբ ուխտիս, ետու ընծա»²⁶: Մալիքան Հովհաննավանքի գավթում, Կաթողիկէ եկեղեցու մուտքի ձախ կողմում կանգնեցրել է գեղաքանդակ խաչքար, որի պատվանդանին փորագրված է. «Ես՝ Մալիքա... սն(ու)ց(ա)նող աստուածասիրին Խորիշահի կանգնեցի զխաչս ի փրկութիւն հոգո իմո»²⁷:

Կողմնակալություն-փոխարքայության տարածքի բնակավայրերը՝ գյուղերն ու գյուղաքաղաքները ունեին իրենց ավագները, որոնք, ամենայն հավանականությամբ, կոչվում էին **տանուտեր** կամ **ռայիս**: 1338-ից հետո Կարբիի հաղթականար-եկեղեցու պատին փորագրվել է. «ես՝ Երանաւս, Կարբոյ տանուտէրս շինեցի ձիթահան...»²⁸: 1210-ին Բագնայրի արձանագրություններից մեկում հիշատակվում է Օշական գյուղի ռայիսը՝ «Պարսիմո, որդի Հասանայ»²⁹:

Գյուղերում եղել են նաև **ամիրա, ձեռնավոր, գգիր**: 1317-ին Յակոբ երեցը, Ջաքարյան Աղբուղա Գ-ի և Սիթի խաթունի թույլտվությամբ, Այրարատ նահանգի Աշտարակ բնակավայրի Սուրբ Մարինէ եկեղեցու մոտ հյուրատուն և բնակարաններ է կառուցել, որոնք պարոնների հրամանով այլ արտոնությունների թվում ազատվել են **ամիրայի, ձեռնավորի, գգրի** հարկ վճարելուց³⁰:

Վաչուտյանների փոխարքայության հիերարխիայում կային բազմաթիվ մանր իշխաններ, ազատներ: 1310-ին Հովհաննավանքում գրիչ Սարկավագն Ավետարան է ընդօրինակել Մամախաթունի պատվերով: Հիշատակարանից պարզվում է, որ նրա ծնողները՝ Սուպայն ու Տիկնանցը, աղջկան ամուսնացրել են իշխան Ջաջուռի հետ, որը «թէպէտ ազգաւ վիրացի գոլով, այլ կամաւք բարեկամ ամենայն եկեղեցիաց»³¹: Մամախաթունը պատվիրած Ավետարանը նվիրել է Ուշիի Սուրբ Սարգիս եկեղեցուն: Կենսագրական կարևոր արժեք ունեն հիշատակարանի հետևյալ տողերը. «ազատագարն և իշխանուհի գոլով այսու կենաւքս», որոնք հուշում են, որ նա հովհաննավանքի կամ ուշեցի է և հանդիսանում է տեղական իշխանական ընտանիքի ժառանգը, ու ծնողներն իրենց դստերը հավասարի իրավունքով են ամուսնացրել իշխան Ջաջուռի հետ: Այս իշխանական տան տոհմաձառն այսպիսին է.

Ջուրջ (տոհմի պապը)

Սուպայ (կինը՝ Տիկնանց)

Հազարբեկ Կուկոր Ամիր Մամախաթուն (ամուսինը՝ վրացի իշխան Ջաջուռ):

1311-ին Սուպայ իշխանը կառուցել է Ուշիի Սուրբ Սարգիս վանքի

26 **Ղաֆադարյան Կ.**, Հովհաննավանքը, էջ 84:

27 Նույն տեղում, էջ 109:

28 Մեր հավաքածուից:

29 **Ղևոնդ Ալիշան**, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 117:

30 Տեն **Շահագիզ Ե.**, Աշտարակի պատմությունը, Եր., 1987, էջ 189:

31 ԺԴ դարի հիշատակարաններ, էջ 65:

զանգակատունը և արձանագրության մեջ հիշել է Հազարբեկ և Ամիր որդիներին: Սաղմոսավանքին մոտակա Ափնագյուղից երեք եղբայրներ 13-րդ դարի երկրորդ կեսին վանքի եկեղեցի-գրատան հյուսիսային պատին փորագրել են. «Շնորհաւք ամենակալին Աստուծոյ: Ես՝ Սասնէս և եղբարք իմ Վաչէ և Գրիգոր միաբանեցաք սուրբ ուխտիս Սաղմոսավանից և տուաք ի մեր հա(յ)րենի գեղէս Աղբնագեղո հանդէն զՓնտկի տափն որչափ ջուրն դուրս գա :Ա: գութանի հող յաղագովն ջրովի»³²: Արձանագրության «մեր հայրենի գեղէս» արտահայտությունը թույլ է տալիս ենթադրելու, որ նվիրատուներն ազատներ են, նրանք թերևս Ափնա գյուղի սեփականատիրոջ որդիներն են:

Հայրենի Հովհաննավանքի, Սաղմոսավանքի, Ուշիի, Տեղերի, Կարբիի, Եղիպատրուշի, Թեղենյաց վանքի, Աստվածընկալի վանական համալիրների պատերին փորագրված արձանագրություններում հանդիպում են երեք հարյուրից ավելի նվիրատուների անուններ ևս, որոնք նույնպես Վաչուտյան տան ենթակա մանր իշխաններ և ազատներ են: Այդ թիվն առավել է Այրարատի կողմնակալություն-փոխարքայության տարածքի մյուս բնակավայրերի տարբեր կառույցների պատերին:

Փաստորեն փոխարքայության իշխանակարգի գլուխ կանգնած էր փոխարքան: Նրան հաջորդել է ամիրան: Հաջորդը փոխարքայության գորահրամանատարն էր: Կարևոր պաշտոնյաներից հաջորդ տեղում հեջուր-սենեկապետն էր: Ապա գալիս են պալատական սպասարկու անձնակազմի անդամները: Սրանց հաջորդում են պալատական հարկահավաքը, գզիրը: Փոխարքային ենթակա էին նաև մեծ ու մանր իշխաններ և ազատանին: Տեղական կառավարումն իրականացրել են գյուղապետ տանուտեր-ռայիսները, որոնք ևս փոխարքայի պալատի որոշ պաշտոնյաների (ամիր, գզիր, ձեռնավոր) կրկնությամբ ունեցել են ենթականեր:

Աշխարհիկ իշխանակարգին զուգահեռ գործել է փոխարքայության հոգևոր իշխանակարգը, որի գլուխը եղել է արքեպիսկոպոս կամ եպիսկոպոս թեմական պետը (Անբերդի թեմի առաջնորդներ Մկրտիչ եպիսկոպոս, Տեր Հովհաննես (Համագասպի համագահակալ), Համագասպ արքեպիսկոպոս, Վասիլ եպիսկոպոս (Ներսեսի համագահակալ), Ներսես եպիսկոպոս³³), ինչպես նաև նշանավոր վանքերի եպիսկոպոս-վարդապետ վանահայրերը, հոգևոր դպրոցների ըաբունի-վարդապետ կամ վարդապետ պետերը և եկեղեցական քահանայական դասը:

Տիգրան Մ. Պետրոսյանց – գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է 12-14-րդ դարերի Հայոց պատմությունը, Զաքարյան Հայաստանի ժամանակաշրջանը, հայ զինվորականության պատմությունը, հայկական իշխանական զինանշանների պատմությունը, Ապարանի հերոսամարտի պատմությունը, Ապարանի բնակավայրերի պատմությունը: Տպագրել է 54 գիրք ու գրքույկ և շուրջ 100 գիտական հոդված:

32 Մեր հավաքածուից:

33 Տե՛ս **Պետրոսյանց Տ.**, Այրարատյան կողմնակալություն-փոխարքայության հոգևոր կենտրոնները, «Էջմիածին», 2017. Ջ, էջ 50:

PRINCELY DYNASTY OF VACHUTYAN

The Viceroyalty of Ayrarat

Tigran M. Petrosyants

Key words – Zakare B.; Zakaryan; Ayrarat province; viceroyalty; Vache A; capital Amberd; amira; commander-executor; hedjeb; servicemen; vicegerent; adviser; village chief(s); tax collector; messenger.

The administrative government reform was carried out and viceroyalties were formed in Zakaryan Armenia in the early 13th century. The creation of a new government structure presumed the application of new approaches. Courts were also established in viceroyalties: they were formed on the principle of the Zakaryan house. The courts of viceroyalties were the copy of Zakare B’s court. One of the newly created viceroyalties was formed on the territory of the liberated Ayrarat province and handed over to military commander Vache A Vachutyán. The viceroyal had the high title of Prince of Princes headed the hierarchy of the government of the Ayrarat viceroyalty. The viceroyal called himself the Grand Prince, the prince of princes, the paron, the lord, while he called his possessions “princedom” and “viceroyalty”. Other levels of the hierarchy were occupied by the local princes. The Amira, the commander-executor, the Hedjeb, the servicemen, the adviser, the village chief(s), the tax collector and the messenger were considered as the highest-ranking officials at the viceroyal’s court. On the basis of the preserved materials the palace hierarchy of the Ayrarat viceroyalty is presented in the article.

Резюме

КНЯЖЕСКАЯ ДИНАСТИЯ ВАЧУТЯН

Наместничество Айрарата

Тигран М. Петросянц

Ключевые слова – Закаре Б, Закаряны, провинция Айрарата, наместничество, Ваче А, столица Амберд, амира, командующий – исполнитель, геджуб, служивый (е), наставник, сельский(е) староста (ы), сборщик налога, посылный.

В начале 13-ого века в Закаряновской Армении была проведена реформа административного управления и сформировались наместничества. Создание новой структуры управления предполагало применение новых под-

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԿԱՆԱԿՈՒՄՆԵՐ

ՀԻՍՏՈՐԻԱԿԱՆ ԳՐԱԿՐԱՆՈՒԹՅՈՒՆ, 2018 թ. (ԺԶ) քառրդ. թիվ 1 (61), հունվար-մարտ

ՀՀ ԿԱՆՈՒՄԱՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ходов. В наместничествах были также созданы дворы, которые формировались по принципу дома Закарянов. Дворы наместничеств были копией двора Закаре Б. Одно из новосозданных наместничеств было сформировано на территории освобожденной провинции Айрарат и передано военачальнику Ваче А Вачутяну. Во главе иерархии управления наместничества Айрарата стоял наместник, носящий высокий титул князя князей (ишханац-ишхан). Наместник называл себя великим князем, князем князей, пароном, господином, а свои владения “княжеством”, “наместничеством”. Другие ступени иерархической лестницы занимали местные князья. Самыми высокопоставленными чиновниками при дворе наместника были **амира, командующий-исполнитель, геджуб, служивые, наставник, сельский(е) староста(ы), сборщик налога, посольный**. На основе сохранившихся материалов в статье представлена дворцовая иерархия наместничества Айрарата.

REFERENCES

1. **Stepanos Orbelyan**, Patmutivn tann Sisakan, Moskva, 1861, pp 285. **(In Armenian)**
2. **Melkset-Bek L.**, “Vardapetk Hayoc Hyusisayin koxmanc” ev nranc inq-nutyun@, vracerenic targmanec Hrach Bayramyan@, S.Ejmiadzin, 2016, pp 61–63. **(In Armenian)**
3. **Torosyan Xosrov**, “Tagavorneri patmutyunn u govabanutyun@ vorpes Zakaryan Hayastani patmutyan skzbnaxpyur, E., 1992, pp 283–287. **(In Armenian)**
4. **Kirakos Gancakeci**, Patmutyun hayoc, ashxatasirutyamb K.A.Melik-Ohanjanyani, E., 1961, pp 162. **(In Armenian)**
5. **Kirakos Gancakeci**, pp 162–163. **(In Armenian)**
6. Hay joxovrdi patmutyun, h. 3, E., 1976, pp 541–544]. Haykakan hanragitaran, h. 3, E., 1977, pp 676–677: Manandyan H., h. 3, E., 1977, pp 154. **(In Armenian)**
7. Divan hay vimagrutyun. prak 6, E., 1977, pp 22. Makar eps.Barxutareanc, Axuanic erkir ev dracic. Arcax, E., Gancasar 1999, pp 346. **(In Armenian)**
8. **Khafadaryan K.**, Hovhannavanq ev nra arcanagrutyunner, E., 1948, pp 82. **(In Armenian)**
9. Hay joxovrdi patmutyun, h. 3, pp 552. **(In Armenian)**
10. JG dari hishatakaranner, E., 1984, pp 82. **(In Armenian)**
11. JD dari hayeren cerageri hishatakaranner, kazmec L.S.Khachikyan, E., 1950, pp 270: **Khafadaryan K.**, Hovhannavanq, pp 82,90,92. Divan, 6, E., 1977, pp 187. **(In Armenian)**
12. [Mer havaqacuyic].
13. [Mer havaqacuyic].
14. **Khafadaryan K.**, Hovhannavanq pp 95. JD dari hishatakaranner, pp 65]. **(In Armenian)**

15. **Khafadaryan K.**, Hovhannavanq pp 94. **(In Armenian)**
16. Մեր հազարամյակը:
17. **Khafadaryan K.**, Hovhannavanq pp 94. **(In Armenian)**
18. **Khafadaryan K.**, Hovhannavanq pp 94. **(In Armenian)**
19. **Khafadaryan K.**, Hovhannavanq pp 89. **(In Armenian)**
20. **Khafadaryan K.**, Hovhannavanq pp 89. **(In Armenian)**
21. Hay joxovrdi patmutyun, h. 3, pp 553. **(In Armenian)**
22. **Khafadaryan K.**, Hovhannavanq pp 83. **(In Armenian)**
23. **Petrosyants T.**, Tiknayk papkasun Hayac ashkhari, E., 2005, pp 69].
Petrosyants T., Hayrenakan mshakuyti pashtpan hay kanayk, Malika, “Echmiadzin”, 1982, D, pp 56–57. **(In Armenian)**
24. **Khafadaryan K.**, Hovhannavanq, pp 87. **(In Armenian)**
25. **Sargsyan G.**, Barcrakash vank ev arcanagrutyunner, “Echmiadzin”, 1951, September–hoktember, pp 40–45. **(In Armenian)**
26. **Khafadaryan K.**, Hovhannavanq, pp 84. **(In Armenian)**
27. **Khafadaryan K.**, Hovhannavanq, pp 109. **(In Armenian)**
28. [Mer havaqacuyic].
29. **H.Gevond Alishan.**, Shirak, Venetik, 1881, pp 117. **(In Armenian)**
30. **Shahaziz E.**, Ashtaraki patmutyun, E., 1987, pp 189. **(In Armenian)**
31. JG dari hishatakaranner, pp 65. **(In Armenian)**
32. [Mer havaqacuyic].
33. **Petrosyants T.**, Ayraratyan koxmnakalutyun–poxarkyutyan hoguevor kentronner, “Echmiadzin”, 2017, Z, pp 50. **(In Armenian)**